

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍՍԱՆՍՈՒՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 ծր.

Վեցամսեայ . . . 7 ծր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրս

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Ի Կ

Մանուգրան սողը
20 սանիքով



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՍԵՆ ՉՈՐԵՔԵՐԹԻ ԵՒ ՇՈՒՍԺ

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Ipravounk“

ВАРНА

Գրոսքիւնք եւս լին
տրոսիր

ԱՆՎԵՐՋԱՆԱԼԻ

ԽՆԴԻՐ ՄԸ

ՉՈՐՍ հինգ տարիներէ ի վեր անվերջանալի՝ և ըստ մեզ՝ շատ աննշան խնդիր մը ատեն ատեն գիտաւոր աստղի մը պէս երևան գալով՝ մեր բարիդարնակ ազգայնոց մտքերը կը յուզէ, կը զայրացնէ, և անոնց մէջ ատելութիւն և հակառակութիւն կը սերմանէ :

Ուսկի՞ց էր, և ի՞նչ թշուառ օր էր այն օրը, որ բրօքսէտօր թումայեան որբանոց բացաւ Անգղիոյ մէջ, ու Հայաստանէն տասը տասն և հինգ որբեր բերել տալու անխոհմութիւնը ունեցաւ :

Կարծես ազգը ուրիշ կենսական խնդիրներ չունի մտածելու, կարծես՝ ըսի ըսաններ քիչ էր լսած, որ ափ մը քաքալիքի պարոններ բաւ չհամարելով Բարիզի սալայատակներուն վրայ իրենց գործած զազրելի շահատակութիւնները, կելնեն ատեն ատեն տետրակ մը կը հրատարակեն իրենց ոխը, իրենց թոյնը թափելու համար սա կամ նա անձանց դէմ, և այս այնպիսի գուհական ոճով մը, այնպիսի անամթ եղանակաւ մը, որ զլուանք կը պատճառէ իրենց խօսքերը կարգացողներուն, և ակնյայտնի ցոյց կուտայ թէ այդ քաքալիքի ներքէ Բարիզ գացած են՝ ոչ թէ լուսաւոր և մարդավայել դաստիարակութիւն մը ստանալու համար, այլ Բարիզի ամենաբարձրի պա՝ֆօն ի մէջ կրթութիւն համար : Ահա Բարիզի ընձեռած մեծամեծ օգուտները մեր ապագայ սերունդի համար :

Այս խօսքերը մեզ ըսել կուտայ «Արդարութեան յաղթանակը» անունով այն կարմիրբեռ տետրակը, որ ստացանք այս օրեւորս Բարիզէն, և որոյ անանուն . . . հեղինակը, թումայեանի որբերու անվերջանալի խնդիրը

ձեռք առած, առանց կարմրելու — որովհետեւ իր տետրակն արդէն կարմիր է։ — Կը ճգնի թուք ու մուր տեղացիներ ալ և հանակամ ենուն զէմ՝ առանց իսկ խորութիւն մը ընելու արժանաւորին ու անարժանին մէջ, պատուաւորին ու անպատուին մէջ, վերջապէս մէկ ջրով կը լուայ ամէնքը, իր միակ պաշտպանած անձը՝ այն է բրօքս. թումայեանը ըստ ամենայնի արգարացնելու համար :

Մենք այն որբոց հնացած ու թաւամած խնդրոյ մասին ո՛չ կամք և ո՛չ ալ յաւակնութիւնը ունինք ո՛չ մի կողմը դատապարտելու և ո՛չ միւս կողման պաշտպան կանգնելու, այլ մենք կը գրենք, սա ըսելու համար, որ այլևս այդ որբոց մեռած խնդրով հասարակութիւնը ձանձրացնելը անօրինակ յիմարութիւն մ'է, և թէ անվայել է, անբարոյական է տետրակին անանուն հեղինակին այն անխորաբար ըրած անպատկառ խօսքերը, որոնցմով չէ որ կրնայ արդարացնել զթումայեան :

Իսկ դադարեալ ընկերութիւններէ մնացած գումարներու համար կարմիրբեռ տետրակին անճոռնի եղբայրացութեան գալով, կը զարմանանք թէ՛ ի՞նչ իրաւամբ կուզէ, որ դաշնակցական Բարիզի մարմինը պաշտօնաւսկան ամսագրու կերպով գրաւէ այն գումարները, արդեօք իր ազգակործան խլրտուներուն գոհացում տուող ձեռնարկութիւններ կատարելու համար :

Ալ բաւ է . . . բաւ :

Հ.

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻՈՑ ՄԵԶ

Ռուսիոյ մէջ խոլովութիւնները օրէ օր սաստկանալու վրայ են թէ եւրոպական եւ թէ կովկասեան մասերու մէջ :

Չորաց մէջ ապստամբութիւնը վերբուկացած է երեւի տակաւ առ տակաւ առ մեն կողմ, Գուրոքի եւ Կոստոյի զօրաց ապստամբութենէն յետոյ, ահա՛ այժմ կիմացուի նաեւ, որ Բոլթաւայի մէջ

բանակող Նէլցի զօրագունը ապստամբեր է, եւ Սէնսքի զօրագունը ու թնդանօթածիզ զօրաց գումարտակը Նէլցի զօրագունին պատուիրակութիւն մը զրկելով՝ իրենց համակրութիւն ու համամտութիւնը յայտնեցին : Բեթերսպուրկէն Յունիս 18 ամսաթուով քաշուած հեռագիր մը կըսէ թէ՛ ամեն տեղ ուր որ երթաս զօրաց մէջ ծագած անկարգութեանց վրայ կը խօսուի, Դիւանարանութեան օրկանն եղող լրագիրները այս անկարգութեանց պատճառ կը համարեն յեղափոխականները իբր թէ անոնք գրգռած ըլլան զօրբեր :

Միւս կողմէ ուրիշ ամեն ուսական լրագիրք ընդ որս եւ Վայեկնի Մօլոս զինուորական օրկանը, զօրաց մէջ տեղի ունեցած անկարգութիւնները եւ անհնազանդութիւնները կը վերագրեն կառավարութեան, որ իր խոստումը չը բռնելով տակաւին զինուորական բարենորոգումներու ձեռնարկել չուզեր, եւ զօրաց մէջ յետադիմական գաղափարներ կը քարոզէ :

Շատ մը զինուորականներ գտնատագիրներ զրկած են Տումայի յայտնելու համար որ իրենց գլխաւորները թոյլ կուտան կարգաւ միայն այն լրագիրները, որ Տումայի դէմ գրգռող յօդուածներ կը ղեկնեն :

Իսկ Բոլթաւայի նահանգաց մէջ՝ հակառակ պաշարման վիճակի բանեցուցած ամեն խառութեանց, ամեն օր ժողովրդային անկարգութիւններ, ըսպանութիւններ եւ հրէհներ անպակաս ի գործ կը դրուին :

Կոստոյի մէջ կողակներու սպայի վերայ ուժ մը արձակուելով վիրաւորած է ծանրապէս եւ չըմկայ տուներուն ապակիները ջարդափշուր եղեր են :

Պրէսթ-Լիթօփի քաղաքին ոստիկանայետը սպաննուեր է փողոցին մէջ :

Քալիշի մէջ նետուած ուժ մը մը վիրաւորած է մի հազարապետ եւ 3 զօրբեր :

Յունիս 15 ին Պիայօթօկի մէջ տեղի ունեցած կաթողիկոսեան թափօրի ատեն, ուժ մը նետուեցէ որ քանի մը մարդ սպաննուի :

Միւսեւոյն օրը օրթոքքներու թափօրին վրայ ալ պատշգամբ մը իջվելէն արձակեց են եւ քահանայ մը վիրաւորեց :

Թափօրներուն հետեւող ժողովուրդը այս ուժաւորութեան եւ զինարձակութեան հեղինակները հրեայ կարծելով բազմութեամբ հրէք թաղին վրայ յարձակած են, եւ 200 ի չափ մթերանոցներ աւերեցին :

Չորքը հասեր եւ բազմութեան վրայ հրացան արձակեց :

Երեւոյն չափ եղած են մեռնողները

իսկ վիրաւորեալները հարիւրէ աւելի : Իսկ Ռուսաստանի միւս նահանգաց մէջ գործուած անկարգութիւնները այնչափ շատ են, որ անհնար է մի առ մի թուել եւ յիշատակել :

Մէկ միջոց կարծուեցաւ թէ Տումայի հաստատմամբ Ռուսիան այլևս պիտի սկսի հանդարտիլ, բայց քանի որ յետադիմականութիւնը հետամուտ է Տուման տապալել եւ իր առաջնայ ընթացքով կառավարել Ռուսիան, հարկաւ ժողովուրդը փոխանակ հանդարտելու, առաջուանէ տեւի զայրացած դիրք մը բռնած է, եւ ամեն բան աչքն առած է ընել իր ազատութիւնը ձեռք ձգելու համար :

Տեսնենք ուր պիտի երթայ այս անիշխանական անորոշ դրութիւնը, եւ քանի՞ պիտի նստի Ռուսիոյ գլխուն :

ՏՈՒՍԱՅԻՆ ՇՈՒՐՁԸ

Հողային գործոց վրայ Տումայի մէջ ատենախօսութիւնները կը շարունակուին : Այս խնդրոյն վրայ տակաւին 117 հոգի արձանագրուած կան որ պիտի խօսին : Դիւանը կառավարիչէ որ իւրաքանչիւր 10 վայրկեանէ աւելի չը խօսի որպէսզի հողային խնդիրը ժամ մը առաջ վերջանայ ու օրակարգի ուրիշ խնդիրներուն սկսէ Տուման, բայց այս առաջարկութիւնը կը մերժուի ժողովին կողմէ :

Երեսփոխան թաթարինօֆ կառավարիչ քոլոբովն զաղեցնել ատենախօսութիւնները, ըսելով որ ազգը ա՛լ ձանձրացած է ու չկրնայ երկարօրէն սպասել : Թաթարինօֆի այս խօսքերը թէեւ Տուման երկարօրէն կը ծափահարէ, բայց եւ այնպէս ատենաքանները կը շարունակեն դարձեալ խիստ երկնցնել իրենց խօսածները, ժողովոյ մէջ ընդհանուր ձայնաբերութիւնով : Այնպատուորաց խմբակի երեսփոխան Ալատինի ատենաքանութիւնը այլ եւ այլ միջադէպեր կը յարուցանէ : Այս ատենաքանը գիւղացոց կողմէ իրեն գրուած նամակներ կը հանէ կը կարդայ, եւ թէեւ այն նամակաց մի քանի խիստ խօսքերը զանց կընէ՝ Էարդալ, բայց իր կարգալու եղանակէն ամենքը զիւրաւ կը հասկնան անոնց նշանակութիւնը : Ատենապետը բազմիցս ի կարգ կը կոչէ Ալատինը. (բռնած փահարութիւնը, աղմուկ) :

Սահմանադրական-աւստիարական երեսփոխաններէ ոմանք սրահէն կը մեկնին Ալատինի ընթացքին դէմ բողոքելով :

Իսկ Այստին շարունակելով այսպէս
կը վերջացնէ իր խօսքը. «Այլեւս
պէտք չէ սպասել, հարկ է դիմել մէ-
կու մը եւ անոր օգնութիւնը խնդրել
յեղափոխութիւնը ծագելէ առաջ :
Ֆրանսայի ժԸ դարու ազգային ժո-
ղովոյ նման նոր Տուժա մը հարկաւ
պիտի աշխատի իրաւասական ձեւ մը
տալ կատարուած գործողութեան,
երբ առաւ ժողովուրդը բոլոր հողե-
րը գրաւէ եւ ամեն խոշորոտները
չըլնու ըլլայ : » (բուն ծափահարու-
թիւնք) :

«Նօվոյէ Վէրման» կրէ թէ կա-
ռավարութիւնը որոշած է Տուժայի
անդամներէն 14 հոգի դատաստանի են-
թարկել անոր համար՝ որ յայտարա-
րութիւն մը ցրուելով ժողովուրդը կա-
ռավարութեան դէմ ապստամբեցնել
ուզած են, սակայն չսկսել զանոնք
այս միջոցիս բանտարկել՝ ինչու որ
իբր երեսփոխան անդամարարելի կը
համարուին ըստ օրինի :

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Կաւկասիայի մէջ խառն կութիւն-
ները մարդասպանութիւնք աւելի
գերակարգութիւնք օրէ օր շատնալու
վրայ են, եւ մեր ազգային եղբարք
ամեն տեսակ թշուառութեանց եւ
նեղութեանց ենթակայ եղած են :

Թիֆլիզէ քաջուած նոր հետադրի մը
համաժամ, Երեւանեան պազարին հրա-
պարակին վրայ չորս թուրքերու մէջ
տեղի ունեցած վէճի մը առթիւ,
յանկարծ կատաղի կռիւ մը ծագել է
հայոց եւ մահմետականներէն
2 հոգի սպաննուած են, 16 մարդ եւս
վիրաւորուած է :

Ուրիշ հետադրի մ'ալ իմաց կու-
տայ որ Շուշիի մէջ եւս թուրքերը
յարձակած են հայոց վրայ եւ երկու
կողմէ սպաննութիւններ գործուած
են :

Ըսել է որ զարձակ կը վերսկսին
անցեալ տարուան եղած գէշութիւն-
ները :

Մշակի մէջ կը կարդանք.

Գանձակ.— Երէկ, մայիսի 19 ին,
կէսօրից յետոյ ժամը 6 ին, երկա-
թուղւոյ կայարանի ճանապարհին ըս-
պառազինուած թուրքերի մի խումբ

յարձակվում է կայարանից քաղաք ե-
կող հայ սայապանների վրայ : Վեր-
ջիններս ազատվում են չորհրդի ե-
րեք ուսու զինուորի, որոնք գալիս
հասնում են դէպքի վայրը պատահ-
մամբ : Դրո՞թիւնը լարվում է. սա-
կայն յոյս կայ, որ խաղաղութիւնը
քաղաքում չի խախտվի :

— Սուրմալու.— Մայիս 9 ին Ղա-
մըջան գիւղի հանդերձի ժողով, իրանց
ցանքսերը ջրելու ժամանակ, սպան-
վել էին երկու հայեր Հախվերիս գիւ-
ղից :

Նրանց գնդակահար անելուց յետոյ,
գլուխները կտրոււմ են ու տանոււմ,
թողնելով միայն գիւղիները :

Ինչպէս պատմում են, — եւ մի քա-
նի մասնակի ստուգութիւններով
հաւանականութիւն էլ է ստանում
այդ արդէն,— մի ազգեցիկ թուրք
այդ կտրված գլուխները տարել է
Այրուսիսի խաներին (կողքի մասե-
րում) ցոյց տալու, այնտեղից էլ տա-
րել է Ուլուխանյու գիւղը ու յետոյ
էլ Երեւան, երեւի ջանքարներու
զլխաւոր շտաբից պարգեւ տալու :

— Գանձակ.— Անցեալ ամսին մի
գիւղեր յանկարծ լսվում է, որ քաղա-
քիցս անհետացել է գանձակեցի
Սմբատ Սիմէօնեանը իր բաղմանգամ
ընտանիքով :

Նա վարում էր տեղիս «Նաւէթտա»
ընկ. գործակալութեան պաշտօնը :

Շաբաթներով նա զբաղված է եղել
իր չար ստաղդութիւնները իրագոր-
ծելու, նա իր փեսայի ձոտ գրաւ է
դրել 11 հազարնոց սեփական տունը,
ծախել է իր մէկ քանի հատ ապրան-
քակիր սայլերը, տան կահկարասիքը,
տոնել է արտասահմանեան անցագիր,
իւրացրել է վերադէր վճարներով
ստացված—քաղաքացիներին պատ-
կանեալ գրամները, ոչնչացնելով բո-
լոր փաստաթղթերը եւ, եթէ հաւա-
տանք չար լիզուներին, ծախել է
բաւականին մանուֆոկտուրային ապ-
րանքներ թէ տեղացիների վրա եւ թէ
ուղարկել է Թիֆլիս ...

Նա իր հետ վերցրել է մի խոշոր
զուժար, ըստ ումնց 80 հազար, ու-
մանց 50 հազար, բայց որքան մննք
ստոյգ աղբւրից իմացանք, տարել է
մօտ 30—35 հազար, թէեւ սա էլ մննք
ստոյգ համարել չենք կարող, քանի
որ պակասում են շատ փաստաթղթեր
ընկերութեան գրասենեակից :

Շատերը նրա այդ քայլն արդարա-

ցնում են նրանով որ իբր թէ նա ըն-
կերութեան հարիւր հազարներ արժե-
ցող ապրանքներ կտտորածր սկսվե-
լուց առաջ փոխադրել է հայոց մա-
սը, հետեւաբար փրկել է նրանց կո-
րուսից, թոյլ չը տալով որ «Բօսիյս-
կի» ընկերութեան պահեստում գրա-
նըվող ապրանքների նման չգոհ գառ-
նան թուրքական թաւանին ...

Արէշի գաւառի իմաստաւ գիւղի
բոլոր ձիւրիներէ կ, մայիսի 23 ին,
քննչին տարան :

Իմաստաւ գտնվում է Արէշի գա-
ւառի վեասված գիւղերի շարքում:
Այժմ նա ենթարկվում է նոր զօրադ-
րութեան : Եթէ տեղական իշխանու-
թիւնը արագ եւ եռանդուն միջոցներ
գործ չը դնէ յետ ստանալու ձիւրը
պատժելու աւազակներին, կարող են
վտանգի ենթարկվել եւ միւս գիւ-
ղերը, որոնք գտնվում են աւելի վատ
վիճակի մէջ, քան իմաստաւը :

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԿԱՐԾԻՐ ԵՒ ԿԱՊՈՅՑ ՆԱԽԱՏՈՐՄԻՆԵՐԸ

Մինչեւ հիմայ նմանը չտեսնուած
մեծ նաւաշարով մը կը կատարուի
այս օրիս անգղիական վիթխարի
նաւատորմի մը կողմէ, որ երկու
մասի բաժնուած միւր կարմիր եւ
միւս կարմիր նաւատորմ անուամբ
իբր երկու թշնամիներ ռազմափոր-
ձեր պիտի կատարեն անգղիական ջու-
րերու մէջ :

Այս հսկայ գործողութեան պիտի
մասնակցին առաջին եւ երկրորդ կար-
գի զրահուորդներ յաճախեան, թօրթի-
լանաւեր, ընդոճկեալ նաւեր եւլն, ա-
մենը 324 նաւ, եւ նաւատորմի զը
պիտի ունենայ 7000 նաւային սպայ
ու 56.000 նաւազ. ու իբր գլխաւոր
հրամանատար 10 Ամիրալ Ա. Բ. եւ Գ.
կարգի :

Յիշեալ նաւատորմի զրամական
արժէքն է 1 973.750.000 ֆր. իսկ
ռազմափորձի գործողութեան համար
որոշուած է ծախք 3.250.000 ֆր.



անյայտ եղած եւ : Անցեալ շաբթուն
քիչ մնաց մէկուս պիտի մօտենայի ու
անունը պիտի տալի անոր ... որովհե-
տեւ ճիշդ քեզի կը նմանէր ու եւ կար-
ծեցի թէ դուն էիր : Աստուած ըրաւ
որ չուտով ետ քաշուեցայ ու հասկցայ
թէ թուրք մըն էր : Չարմա՛նք, ե-
թէ վրայի սալթան, ֆօթուո՛ղ, սեւ կօ-
շիկներն ու երկայն ֆէսը չըլլային ան-
պատճառ կը խաւուէի :

— Ո՛ւր պատահեցաւ այդ գէպքը, ընդ-
հատեց կարիպ Ախպէր ժպտիլ :

— Արարուց հրապարակի վրայ :
Սանկ իրիկուան դէմ էր ու աղէկ մը
չը նշմարեցի նախ իր հագածները :

— Տէր ողորմա՛յ ... Ի՞նչ խելք է
քու խելքդ ... եւ արարուց հրապա-
րակին վրայ ի՞նչ գործ ունէի : Է՛հ,
մարդ մարդու շատ կը նմանի Աւագ
Ճա՛ն : Կըսեն թէ՛ Աստուած մարդիկ
միշտ զոյգ ստեղծած է :

— Իրաւունք ունիս ... քիչ մըն ալ
ցնդեր եմ, այդ է : Ի՞նչ որ է, լուր
մը կա՞յ :

— Աղջկան ծնողքի՞ մասին :

— Այո՛ :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարնոյ Սանասարեան վարժա-
րանի խնամակալութիւնը մտա-
դիր է եղեր վարժարանը Կարի-
նէն Սեբաստիա փոխադրել :

— Վենետիկոյ Ո՛խիթարեան Մի-
աբանութիւնը Պապին գիւժում
ընելով խնդրեր է, որ երջանկա-
յի շատակ Միթար Աբբան, հիմ-
նադիրը յիշեալ Միաբանութեան
Սրբոց կարգը դասուի :

Այս մասին հարկ եղած թղթե-
րն ու վկայագրերը մատուցու-
ած են ստորաւկան ստուգու-
թիւնները ու քննութիւնները
կատարուելու համար :

+ Թիֆլիզի մէջ երկու նոր
հայերէն օրաթերթեր պիտի ըս-
կսին հրատարակելու, մէկը Լոյս
անունով Ս. Շահումեանի խմբադ-
րութեամբ եւ միւսը Նոր Խօսք
անունով Ա. Խումարեանի տնօրէ-
նութեամբ :

— Կիմանանք որ Ռուսմանիոյ
վեհափառ Արքան «Ռուսմանիոյ
Աստղ» պատուանշանին հրամա-
նատարի աստիճանը չնորհած է
Ռուսմանիոյ մեր ազգայիններէն
Մ. Յովհաննէս Չէրքէչլին :

— ԱՐՄԷՆԻԱ՝ Ի մէջ կը կար-
գանք :

«Ուրախութեամբ կիմացունենք
որ առաջիկայ շաբաթ օր յունիս
16, Ս. Գրիգոր լուսաւորչի տօնի
օրը, Մարտէլի հայ գաղութի Ընդ-
հանուր ժողովին ատենապետ եւ
Պարսկաստանի հիւպատոս Տիար
Սիմէօն Ո՛խրդայեանցի կրտսեր
աղջկան Օրիորդ Ալիսի ամուսնու-
թեան հանդէսը պիտի կատարու-
ւի : Նշանածը, Տիար Արտաշէս
Թումանեանց, որ Բագուի եւ Պարս-
կաստանի մէջ իրենց վաճառակա-
նական ընդարձակ յարաբերու-
թիւններով եւ ազդեցիկ գիրքով
ու միանգամայն բարեգործական
ձեւերակներով հանրածանօթ

— Ո՛չ ... բայց ազգականներէն մէկը
չկրցաւ մերժել :

— Սրտցաւ ազգական մըն է :

— Չօրաքոյրն է :

— Է՛հ ... իւր արիւնն է, ի՛նչ ընէ :

Ատիկա աղէկ, ե՞րբ պիտի տանիս :

— Վաղը գիշեր :

— Ո՛ւր կը բնակի այդ կինը :

— Թիմարայ կողմը գտնուած մէկ ան-
նշան գեղին մէջ :

— Ամուսինն ո՞ղջ է :

— Այո՛ :

— Ուրիշ զաւակ ունի՞ :

— Մանջ զաւակ մ'ունի :

— Չափոնա՞ս է :

— Տասնեւինը տարու կայ :

— Ամուսինն է :

— Ամուսինն է :

— Ա՛խ, եւ քու տեղդ ըլլամ, անոր
ծնողքին կառաջարկեմ որ վայրկեան
մը չը սպասեն ... անմիջապէս երկու-
քը իրարու հետ պսակեն ու վերջացը-
նեն :

— Ի՞նչ կըսես, Աւագ Ախպէ՛ր, չէ
որ արեան մերձաւոր ձայն մը կայ, մի-
թէ՞ կարելի է :

Թուամանեց տան երիտասարդ ու զարգացեալ ներկայացուցիչներէ մին է, երեք չարաթէ ի վեր Մարտէյլ կը գտնուի արդէն իր մի քանի աղգակոններ ի հետ մեկտեղ:

— Մարտէյլաբնակ հանգուցեալ Տիար Յովհաննէս Մանուկեանի համար հրատարակած էինք «Արմէնիա» ի 31 թ. թուով թէ կը տակ մը ըրած է որի պարունակութիւն այն ատեն պիտի իմացուի երբ Կ. Պօլսի պատրիարքարանը հրատարակութեան տայ:

Պատրիարքարանի խառն ժողովը մայիս 24/6 յունիսի նիստին մէջ խորհրդակցութիւններ ունեցած է այդ կտակի խնդրին վրայ, և հրատարակութեան տուած իր որոշումները կարգին մէջ կը տեսնենք, որ հանգուցեալ Տիար Յովհաննէս Մանուկեան 2750 օսմ. ոսկի (64,000 ֆրանքի մօտ գումար մը կտակած է եղբոր, որ անոր տոկոսով Եւրոպայի մէջ կրթութիւն ստանան Հայ ուսանողներ: Խառն ժողովը պատշաճ համարեր է իր առաջիկայ նստին հրաւիրել կաւկասեան ժողովուրդներին հապետը, Տիար Սինեքերիմ Մանուկեանը:

Մշակ կը գրէ:
Ներկայումս Թիֆլիսում է գտնվում պրոֆեսոր Ն. Մարը: Պրոֆեսոր Թիֆլիսում կը մնայ մի քանի օր և յետոյ կուղևորուի Անի իր պեղումները շարունակելու: Մար մտադրութիւն ունի կարգադրել Թիֆլիսում մի դասախոսութիւն Անիի աւերակների նշանակութեան և պեղումների կարևորութեան մասին: Եթէ առանձին խոչնդոտներ չը լինեն դասախոսութիւնը տեղի կունենայ առաջիկայ կիրակի օր:



— Ներկայ աղետալի ժամանակներու մէջ, Ախպէրս, ատանկ մերձաւոր արեան ձայնը չէ, Աստուած անգամ չը բողոքէր: Ինչ ընենք աւելի ազէկ է լոյս հաւատքէ հանել գանձք: Ոչ, ոչ, ամենեւին մեղք մը չկայ հոտ ու խղճի խայթը թող չ'ուտէ քեզ:

— Տեսնե՞նք... ես քու առաջարկութիւնդ կընեմ: Իրենք գիտեն, ա՛յ վզերնին ինկած պիտի ըլլայ այդ անմեղ աղջիկը:

— Նայէ եթէ չեն համաձայնիր իմացուր ինձի, ես որք տղեկ մը ունիմ վանքին որբանոցին մէջ զօր կոտորածն յետոյ որդեգրած եմ ու տասն եւ վեց տարու է... անոր կը նշանեմ:

— Բաղաքացի՞ է:

— Իրաւ որ չ'եմ գիտեր... որովհետեւ սահմանադրութիւն վրայ կոտորուող ընտանիքներէն մէկուն զաւակն է: Անունը՝ Ժորայր է:

— Մականո՞ւնը:

— Վարդենց է:

Կարիպ Ախպէր բոլոր մարմնովը սարսուռաց ու էութեան մէջ զգաց որ պարտկա՞րք, անզո՞ւսպ ու անբացա-

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՒ ՄԸ ՅՕՐԵԼԵԱՆԸ

Լոնտոնի Տոսեռի Լան թատրոնի մէջ անգղիացուց խիստ հռչակաւոր էլլէն Թէրրի անուն գերտառնուհին յօրեւեան հանդէսը կատարուեցաւ խիստ փառաւորութեամբ: Շատերը որ ուզած էին այս մի անգամ տեսնելու ներկայացման գտնուիլ, առիթը չփախցուցին: Համար առաջի երեկոյն փողոցին մէջ պտկեցան: Խաղացուելիք խաղերը մեծ հոգատարութեամբ նշանաւոր կտորներէ ընտրուած էին, եւ ասոնք անգղիական առաջին կարգի դերասանուհիները պիտի խաղային: Մասնաւոր ըստ վրայ բազմած էին անգղիական Տրամաթիքական հեղինակներէն ամենէն անունները: Յրանապի հռչակաւոր դերասան Բոքլէն եւ նշանաւոր իտալացի դերասանուհին Տիւզ իրենց աջակցութիւնը ընծայած էին այս փառաւոր մարիոնետի համար որ յօրեւեան պտկ էլլէն Թէրրիին 150,000 ֆր. չահեցուց:

ՄԻԼԱՆԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԸ

Յայտնի է որ իտալացիք այս տարի փառաւոր արուեստահանդէս մը բացին Միլանի մէջ: Այս արուեստահանդէսի հրաշալի չէնքը սկսան չինել 1904 ին: Շինութեանց վարչութեան գրասենեակին մէջ երկու տարի շարունակ զբաղեցան 25 ճարտարագէտներ, 15 ճարտարագէտի օգնականներ, 12 գծագրիչներ եւ 40 հատ մատնագրողներ: Ասոնցմէ զատ աշխատեցան չէնքին վրայ մի շատ ճարտարագետներ եւ 5000 բանուորներ, որոնք երկու տարուան մէջ մէկուկէս միլիոն օրական աշխատութիւն ունեցան: Իսկ հիւսնները, ներկարարները, զարդարիչները եւ այլն քսան ամսուան մէջ 28900 աւուրէջք առին:

ՊՈՒԳՐԵՇԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԸ

Պուգրէշի Արուեստահանդէսի առթիւ առաջնակարգ պանդոկները Մայիսի 10 էն ի վեր այնչափ բարձրացուցած են իրենց գիները, որ ամենապզտիկ անկիւններն անգամ հազիւ օրը 5-6 ֆրանքի կարելի կըլլայ վարձել: Երրորդ յարկի վրայ եղող սենեկի մը օրական վարձքն է 12 էն

մինչեւ 15 ֆրանք, իսկ միւս յարկերու անհակներու համար մինչեւ 60 ֆր. օրական վարձք կը պահանջեն:

Ճշտարանները եւս շատ բարձրացուցած են իրենց գիները, եւ քաղաքին մէջ ուտեստի վերաբերող ամեն պաշարելինաց գներու վրայ զգալի տարբերութիւններ կան: Կառապանները ոստիկանութեան կողմէ զրուած թարիֆները առ չ'ոչինչ համարելով ամեն օր ոսկի կը կտրեն պահանջած ու ստացած բարձր վարձերով:

ԲԱՐԻՉԻ ՀԱՅԱԿԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

(Շար. Նախորդէն եւ վերջ)

Այս պայմաններուն մէջ դիւրաւ կերեակայուի որ վերոյիշեալ ենթադրական դրամագլուխը չափազանց հեռու է այն գումարէն որ բացարձակապէս անհրաժեշտ է իւր սկզբնական դրամագլուխ՝ իր արտադրած տոկոսովը ապահովելու համար ծրագրին ամբողջական ու միասնական գործադրութեամբ: Ուսկից եւ ինչ կերպով Միութիւնը կը յուսայ ընձեռել այդ անագին տարբերութիւնը: Միայն՝ «սիշնակարգ գրչերովիկ քօլէժ-վարժապետանոց»ը եւ «հայկական մեծ թանգարան մատենադարան» կանհրաժեշտ են սկզբնական դրամագլուխ մը որ ամեն բան լաւ հաշուելով քանի միլիոնէ պակաս չէ ապահովաբար: Ընթացիկ է որ կանոնագրութիւնը կըսէ թէ ընկերութիւնը միառմի պիտի ձեռնարկէ իր նպատակներուն գործադրութեան, բայց այդ պարագային մէջ կէտք է ենթարկել որ Միութիւնը պէտք կը կարծէ թէ անդամաճարները աստիճանաբար պիտի աճին, լայն սակով մը, գրեթէ երկրաչափական լաւաջատուութեամբ, այնպէս որ սկզբնական դրամագլուխին յարաձուռն տոկոսը պիտի թոյլատրէ հետզհետէ աւելի բազմաձայն նպատակներուն գործադրութեան ձեռնարկել:

Եւ սակայն կը բաւէ իրականութեան զգացման անդրադառնալ համոզուելու համար թէ՛ այս ենթադրութիւնը ստուգութեան վերածուելու

խղճիս հետ ու թողուլ որ ասանկ առաքինի մարդու մը որդեգրին ըլլայ ան ու անոր ծոցին վրայ սնանի ի՞նչ միտն ու ոսկորը վրան կապած ընկեցիկ մը...:

— Ինչու լոնցիր, հարցուց Աւագ անտառապահը: Դէ՛ չ կըսեմ...:

— Աղէկ կըսես, բայց... խղճուեցաւ Կարիպ Ախպէր:

— Ինչ բայց... արգելք մը կայ:

— Ո՛չ... միայն թէ ինքնագլուխ ատանկ բան մը չ'եմ կրնար ընել: Գանի որ իր հօրաքոյրը յանձնառու կըլլայ քովը ընդունելու, ա՛յ իր գիտնալու գործն է, անանկ չէ՞:

— Շիտակ է, սակայն, ըստ իս, քու իրաւունքդ ամենէն աւելի մեծ է... որովհետեւ դուն այդ աղջկան ազատարարն ես:

Խօսակցութիւնը կարճ կապելու համար, Կարիպ Ախպէր քառորդ մը առաջ դուրս ելաւ ու դէպի պարիսպներ դուռը յառաջացաւ: Լսեց որ դռնապանը նիգրը կը քակէր ետեւէն: Սպասեց: Երբ դուռը բացուեցաւ, իսկոյն ներս մտաւ ու վանհօր խոցը

ոչ մէկ հաւանականութիւն կընծայէ: Ինչպէս կը տեսնուի Միութեան ծրագրին կարելիութիւնը կախում ունի անոր գործադրութեան եղանակէն: Եթէ ընկերութիւնը կը փափաքի միեւնոյն ժամանակ սկսիլ իր նպատակներուն ամբողջութիւնը գործադրելու՝ սկզբնական ահագին դրամագլուխ մը անհրաժեշտ է—ինչ որ բացարձակապէս անհնար է հայթայթել իրերու ներկայ վիճակին մէջ: Եթէ որոշէ ինչպէս հիմակուհի մը ըրած է յաջորդաբար եւ մի առ մի իրագործել իր առաջադրութիւնները պարտի երկար ժամանակամիջոց մը (տասնեակ տարիներ) սպասել իր նըպատակներուն ամենէն չողջունին ձեռնարկելու համար,— ինչ որ զեզօնութիւն տեղի տալու բնութիւնն ունի:

Այս ամենէն կը հետեւի որ Միութիւնը գործադրութեան որ եղանակն ալ որդեգրուելու ըլլայ առաջին քայլերէն իսկ դատապարտուած է անգործութեան:

Արգ՝ ոչինչ կըսէ թէ ասիկա մեծ չարք մըն է՝ ընդհակառակը: Եթե Միութեան արդի տնօրէն խորհուրդը բաղադրուած չըլլար մաքուր տարրերէ՝ ինձի պիտի թոյլատրէի նոյնիսկ իր կանոնադրութիւնը ընթացիկ շրջաբերականներուն այն ճարտարագործական ընկերութեանց, որոնց հիմնադիրները չափազանցեալ գոյներով կը նկարագրեն շահագործուելիք հանքերն եւ եւակայական ճոխութիւնները եւ հասարակութեան առջեւ կը գծեն աղւոր բաժնեգրներու ակնապարար հեռապատկերը, ընկերութեան բաժնեթուղթերը քնել տալու միակ դիտաւորութեամբ:

Բայց միշտ խնդիր է թե ենթադրելով իսկ որ Տնօրէն Խորհուրդը աւելի գործնական ոգիէ մը ներշնչուած պիտի չափաւորէ իր ծրագրերը իրականապէս կարելի միջոցներու սահմանին մէջ: Բարիքի հայկական Միութիւնը յաւերժապէս պիտի գտնուի իր ընդհանուր նպատակին բարձրութեան վրայ: Նմանօրինակ ընկերութեանց պատմական փորձառութիւնը մեզի կարծի ու անդրդուելի սկեպտիկութեան մը կը հրաւիրէ այս մասին: Եւ իրաւ Բարիքի աղգային հողը եւ պայմանները յուսահատական կերպով ապերախ են: Ժողովուրդին նիւթական ու բարոյական շահերուն պաշտ-

գնաց: Առաքինազարդ կղերականը աղօթելէն կը վերադառնար:

— Դուն ե՛ս, գաւա՛կս, ըսաւ ան՝ իր խանդաղատալի ձեռքն երկնցնելով:

— Ես ե՛մ, Սրբազան հայր, պատասխանեց Կարիպ Ախպէր՝ անոր աջը համբուրելով:

— Վարսենիկիդ համար հող մը ընէր... անիկա վարժուեցաւ ու միշտ կաղօթէ խուցիս մէջ:

— Բնա՛ւ դու չ'եկաւ:

— Երթալէ քիչ վեր:

— Այո՛:

— Ամենեւին: Անոր ամեն բանը կարգին է: Խոցիցս ետին պարիսպին ասդիկ կողմը, պզտիկ պարտէզ մը ունիմ, երբեմն հոն կեւնէն ու նոճի՛յ մը ծառ տակ նստած կը կարդայ: Ինչքան ուսումնասէր է... բաւական ալ զայգացած կերելի:

(Շարունակելի)

պանուսին ձգտող ու եւ է հանրային
ձեռնարկ դատապարտուած է խմբե-
լու այն դառնաթոյն խորշակէն որ
կը փչէ տխուր՝ յառիտենական մեծ ա-
ղաներու շարքերէն, եւ առանց դժբաղ-
դութեանց մարգարէ մը ըլլալու՝ կա-
րելի է նախատեսել որ Բարիքի Հայ-
կական Միութիւնն ալ՝ իր կազմու-
թեամբը այնքան դիւրաբեկ ու հիւան-
դազին արդէն՝ խաղալիկ մը պիտի ըլ-
լայ թիչ ատենէն՝ այդ հողմին վայրագ
շունչին։

ԱՐՏԱՇԷՍ ԺԻՉՄԷՃԵԱՆ

Գօնութանցա

ՀԵՌԱԳՐԱԼՈՒԹԵՐ

Հիւրըրու, 14 Յունիս

Մեծ պայթում մը տեղի ունե-
ցաւ Հալեքֆօրտ նաւուն մէջ՝ որ
նոր եկեր էր Ամերիկայէն։ Հըր-
դէհը չուտով կարելի եղաւ մա-
րել, սակայն 9 հոգի մեռան և
40 հոգի վիրաւորուեցան։ Կը
կարծուի թէ այս պայթումը դը-
ժոխային գործիքով մը պատճա-
ռած է։

Ափրիկ. թարապուս, 14 Յունիս
Պէնկաղիի շուկային մէջ հրդեհ
ծագելով 101 խանութ այրեցան
և շատ խանութներ ալ կողոպտո-
ւեցան։

Վիէննա, 15 Յունիս

«Նայէ Յորայէ Բրէսսէ» կ'ըսէ
որ Սերպիոյ թագաւորը ի մօտոյ
արտասահման երթալով այցելու-
թիւն պիտի ընէ Եւրոպական մի-
քանի Վեհապետաց, ի մասնաւո-
րի Աւստրիոյ Յրանց Եօզէֆ Կայ-
սեր։

Պելկրատ, 15 Յունիս

Սերպիական պաշտօնական աղ-
բիւր մը Պուլկարիոյ Ֆէրտինանտ
իշխանին Սերպիոյ թագաւորի
հետ տեսակցելու լուրը սուտ կը
հանէ։

Աթէնք, 14 Յունիս

Յունաստանի և Ռումանիոյ մի-
ջեւ եղած դիւանագիտական յա-
րաբերութիւնները պաշտօնակա-
նապէս խզուեցան։

Գահիրէ, 14 Յունիս

Երէկ, Անգղիական զօրքերը
Գահիրէէն Աղեքսանդրիա երթա-
լու տունն, հինգ սպաներ թան-
թայի մօտ գիւղի մը մէջ աղանի
որսալու գացին։

Գիւղին բնակիչները զիրենք
չըջապատելով ձեռքերնին եղած
հրացանները յափշտակեցին, և
յետոյ ցուպերով ծեծեցին զի-
րենք։ Պիւլ հարիւրապետը իր
ստացած վերքերու հետեւանք
մեռաւ, Բիւնա Քօֆֆին հարիւրա-
պետին մէկ բազուկը կտրեցաւ,
և Սմիթվիք տեղակալը ծանրապէս
վիրաւորուեցաւ։

Բեթերսպուրկ, 14 Յունիս

Լրագիրները կը հաստատեն թէ
սաստիկ յուզում մը կը տիրէ Բե-

թերսպուրկի, Մոսկվայի եւ ուրիշ
շատ քաղաքներու գործաւորաց և
Քրօնշդատի նաւաստիներուն մէջ։
Թէ գործաւորները և թէ նաւաս-
տիները յաճախակի միմիկներ
կը կազմեն։ Կառավարութիւնը
զգուշական միջոցներ ձեռք կառ-
նէ պատահելի ամեն անկարգու-
թեանց դէմ։

Բեթերսպուրկի բոլոր բանուոր-
ներուն պատուիրակաց մի գու-
մարման մէջ՝ որուն կը մասնակ-
ցէին գործաւոր երեսփոխաններ,
այս վերջինները յորդորեցին որ
գործաւորները Տուման պաշտպա-
նեն և գործադուլներով ու ցոյ-
ցերով ճնշում բանեցնեն հառա-
րակութեան և կառավարութեան
վրայ։

Հոլային շարժումը մեծ ըն-
դարձակութիւն կառնէ Սամարա-
յի, Սարաթովի, Քօսթրօմի, Քիէ-
վի, Վոլհինի և Բօլթավայի նա-
հանգաց մէջ։

Վիլնա, 16 Յունիս

Պիալսթօքի խռովութեանց մա-
սին երեւցած պաշտօնական յայ-
տարարութիւն մը կըսէ այսպէս։

«Բաղաքին կառավարիչը Յու-
նիս 14 ին թափօրներու խռովու-
թիւններ չը ծագելու համար ըզ-
գուշական խիստ միջոցներ ձեռք
առած էր։ Զօրքը՝ Կաթոլիկ և
Օրթօքս Թափօրներուն անցնե-
լու տեղերը շարուած էր, սակայն
հրէից բնակած շատ մը տներէն
հրաձգութիւններ եղան։

Մեռնողներուն թիւը տակաւին
պաշտօնապէս չէ յայտնի, բայց
մեռածներուն մէջ կը գտնուին
2 տղաք որ սրբոց պատկերները
կը տանէին Թափօրի առաջէն, և
երեք ալ կիներ։

Շուկայի հրապարակին վրայ եր-
կու ռումբեր նետուեցան, որոնց-
մէ միաս չպատահեցաւ։ — Ահա՛,
այս ատեն էր որ գիւղացիք, գոր-
ծաւորք և ուրիշ անձինք որ թա-
փօրին կը հետեւէին, կատուեցան
և յարձակեցան այն անձանց վը-
րայ որ հրազէն արձակուած առու-
նեքէն կը փախչէին, և ուրիշ հը-
րէից տուներ ալ կոխեցին։

Զօրքերը միջամտեցին, որպէս
զի չափազանցութիւններ չըլլան։

Երեկոյին, խաղաղութիւնը տի-
րեց, բայց երէկ առաւօտ խռո-
վութիւնները վերստին սկսան և
շատ ռումբեր նետուեցան բազ-
մութեան վրայ։

Բազմութիւնն յայնժամ ոստի-
կանութեան պահականոցին վրայ
ալ յարձակեցաւ, և մեռան փո-
ղցին մէջ երկու ոստիկաններ։

Նոյնպէս 16 հոգի ալ Զկերցի
պահականոցի վրայ յարձակեցան
և հոն ալ երեք պաշտօնեայ և
մէկ զինուոր վիրաւորուեցան։

Յետոյ օգնական զօրքը հոս-
նելով խռովարկուք փախան։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկար կըթական նախարա-
րութեան պաշտօնեաներէն և Սօ-
ֆիայի դիմադիօնի բրօքէսէօր
էմմանուէլ իվանօֆ այս օրերս
անձնասպան եղած է 38 տարե-
կան հասակին մէջ իր քաջած-
անգարմանելի մի հիւանդու-
թեան պատճառաւ որ յուսահա-
տութեան մէջ ձգած էր։

— Շաբաթ օր ոմանց զայրոյ-
թը և ոմանց ալ ծիծաղը շար-
ժող արտաքոյ կարգի տեսարան
մը տեղի ունեցաւ քաղաքի մէջ։

Կ. Պօլսէն եկող աւստրիական
չոգենաւը հազիւ քարափին մօ-
տեցած էր, որ պուլկարներու
անհամար բազմութիւն մը գա-
ցեր պաշարած էր չոգենաւը։

Շոգենաւուն մէջ կը գտնուէր
Յունաց նորընտիր մետրապօլիտը
որ վառնա կուգար իր պաշտօնն
ստանձնելու։

Ասի իմացեր էին պուլկարները,
ուստի՝ ինչպէս ըսինք, բազմու-
թեամբ դիմած էին քարավիւր
մետրապօլիտին ցամաք ելնելն
արգելելու համար։

Բազմութիւնը վայրկեանէ
վայրկեան կաւելնար, պուլկար-
ները զայրացած կաղաղակէին,
կը պուլսէին որ մետրապօլիտը
դուրս չպիտի ելնէ, սպառնական
խօսքեր իսկ արտասանողներ ե-
ղան, և այս աղմկալից պուլ-
տուքներուն հանդէպ ոստիկա-
նութիւնը հանդարտօրէն հան-
գիստեռ կըլլար միայն։

Իսկ երբ պուլկարական բազ-
մութիւնը համոզուեցաւ որ յոյն
մետրապօլիտը վախէն չպիտի
համարձակի ելնել վառնա, այլ
պիտի վեռադառնայ նորէն Պօ-
լիս, այն ատեն մեծ թափօր մը
կազմելով սկսաւ դէպի յունաց
մայր եկեղեցին յառաջանալ
բարձրաձայն աղաղակներով։ Ա-
ռաջէն կընթանար մի բաղդաւոր
էշ վրան վերարկու մը նետուած
իւր յոռնաց նորընտիր մետրա-
պօլիտը, Պուլկարաց քահանա-
րը և յունաց զայրոյթը խիստ
հետաքրքրական հակապատկեր-
ներ կը ձևացնէին։ Վերջապէս
այս կերպով հասաւ Թափօր, յու-
նաց Այ Նիքօ, եկեղեցւոյ առա-
ջը, պուլկարները հոն ևս մի
քիչ աղաղակելէ յետոյ սկսան
ցրուիլ ոստիկանութեան ըրած
հանդարտ յորդորներուն վրայ։

Իսկ մետրապօլիտը միևնոյն
աւստրիական չոգենաւով Գօնս-
թանցա գնաց, ուրկէ պիտի վե-
րադառնայ Պօլիս։

Այս ցոյցը թէ և նախատական,
յայտնի բան է որ պուլկարները
ըրին իւր վրիժառութիւն ամեն
այն յունական արիւնալից սպան-
նութիւններուն, որ յոյները
տակաւին կը շարունակեն ընել
Մակեդոնիոյ մէջ ամենամեծ
անգթութեամբ։

ԹՈՒՐԿԻԱ

Կ. Պօլսէ քաջուած հեռագրի
մը նայելով՝ բարձրագոյն դուռը
նկատողութեան առնելով թա-
պահի միջադէպի ժամանակ անգ-
ղիական մամլոյ թերթերու թեամբ
ձեռք առնուած ճնշողական մի-
ջոցները, մտադիր է տէրու-
թեանց առաջարկել որպէսզի
Պօլսոյ 1896 ի ջարդի ատեն ա-
ւելցուած դեպքական երկրորդ
պահակականները տէրութիւնները
ետ քաշեն։

— Մանասթըրէն առնուած հե-
ռագրեր կիմացնեն որ մայիսի
29 ին Հակա Փօրինա ըսուած
տեղը 150 հոգի նոց յունական
խումբ մը թուրք զօրաց հետ
սաստիկ կերպով պատերազմե-
ր են։ Յոյները 46 հոգի կորուսե-
ր են, որոց 26ը մեռեալ և 20ը
վիրաւոր և 5 հոգի ալ կըսուի
թէ գերի առեւ են, իսկ թուր-
քերը ունեցեր են 3 մեռեալ և
5 վիրաւոր։

— Եգիպտոսի Խըտիվ Ապպաս
Հիւսի իշխանը Պօլիս եկած է,
ուր մի քանի շաբաթ պիտի ան-
ցընէ, ինչպէս սովոր ունի ընել
ամեն տարի ամարային այս եղա-
նակի մէջ։

ԸՆՏԻՐ ՔԱՅԱՆ

Զուտ խաղողէ պատրաստուած քնա-
կան քացախի նորահաստատ մեր մթե-
րանոցը առիթ կընծայէ յարգող հասա-
րակութեան որ ասկէ յետոյ զերծ մը-
նայ խարդախեալ այլ եւ այլ դեղերով
պատրաստուած կեղծ քացախներու վը-
նաներէն։ Մեր քացախին անարատու-
թիւնը եւ աղղուութիւնը ամեն երաշ-
խիք կընծայէ իր առողջութեան նա-
խանձախնդիր յաճախորդին, որ անգամ
մը փորձելով արդէն հաստատած պիտի
ըլլայ գերազանցութիւնը։

Գուրսէն մեծաքանակ յանձնարարու-
թիւնք փութով կը գործադրուին ի
հարկին նմոյշ դրկելով։

Հասցէ՝ ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍՍԱՊԵԱՆ

Դ. Թաղ փողոց Գօլօնի Թիւ 65 ՎԱՌՆԱ

«Մ Շ Ա Կ»

Օրաթերթ քաղաքական, գրական

Բաժնեգրին՝ Եւրոպայի համար 30 ֆր-
Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաս-
տանի եւ Ռուսաստանի համար 10 ռուպ-
լի տարեկան։

Հասցէ՝ Խմբագրութիւն «Մ Շ Ա Կ» ի
(Կովկաս) Թիֆլիս

Одговорились А. Курбетиянъ
редакцията Д. Тодоровъи С-не—Варна

